ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՎԱՆԱՁՈՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՎԱՆԱՁՈՐ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տաշիր-Ձորագետի շրջանը և հատկապես Վանաձոր քաղաքի տարածքը հարուստ են մեծ ու փոքր հնագիտական հուշարձաններով («Թագավորանիստ», «Մաշտոցի բլուր», «Քոսի ճոթեր»), բրոնզե դարի և վաղ երկաթի դարաշրջանի (մ.թ.ա. III հազարամյակ) դամբարաններով: Այստեղ ծաղկում է ապրել խեցեգործությունը, զարգացել է մետաղագործությունը:

Բնակավայրի մասին միջնադարից մեզ հասած շատ տեղեկություններ չեն պահպանվել: Միակ հետքը Վանաձորի կիրճում գտնվող Պապանի գյուղն է:

Գուգարքի հետ միասին՝ Վանաձորի տարածքում գտնվող բնակավայրը մ.թ.ա. II դարում եղել է Մեծ Հայքի, իսկ մ.թ. X դարում՝ Կյուրիկյան թագավորություն կազմի մեջ: Ենթադրվում է, որ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) անունը թաթարական է, տրվել է XIII դարի սկզբներին Վանաձորի հյուսիսային բլրի վրա գտնվող սև քարից կառուցված եկեղեցու անունով:

1801թ. Վրաստանի հետ Ռուսաստանին է անցնում նաև Լոռին, և Ղարաքիլիսան դառնում է սահմանային զորակայան: 1849թ. Ղարաքիլիսան Երևանի նահանգի մեջ էր: 1870թ. Դիլիջան-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ ճանապարհի, իսկ 1899թ. Թիֆլիս-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ երկաթուղու, կայարանի, փոստատան և իջևանատների կառուցումը նպաստեց գյուղաքաղաքի ձևավորմանն ու զարգացմանը:

1812թ. Եվրոպացի ճանապարհորդներ Ջեյմս Մորիերը և Ռոբերտ Հերփորթը տեսել են փայտե, հողածածկ տներով մի խղճուկ գյուղակ: Իսկ 1829թ. Ղարաքիլիսա եկած Խաչատուր Աբովյանը վկայում է, որ այստեղ հազիվ 500-600 բնակիչ կար, որոնք գաղթել էին Երևանից: Հետագայում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, Ղարաքիլիսայում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանի Կարս, Արդահան, Բայազետ, Էրզրում քաղաքներից գաղթած մի քանի հարյուր հայ ընտանիքներ:

Նախախորհրդային շրջանում այստեղ գործել են եկեղեցական, ծխական (հիմնվել է 1853թվականին), օրիորդաց (1879), պետական երկդասյա ռուսական (1897) և ռուս պաշտոնյաների երեխաների (1908) դպրոցներ:

Վանաձորը քաղաքային բնակավայր է 1924թվականից: 1929-1930թվականներին կազմվել է Ղարաքիլիսայի (հետագայում՝ Կիրովական, այնուհետև Վանաձոր) առաջին հատակագիծը (ճարտարապետներ՝ Կարո Հալաբյան, Միքայել Մազմանյան, Գևորգ Քոչար), որով նախատեսում էր քաղաքի տարածքն ընդլայնել արևմտյան և արևելյան ուղղություններով՝ Դիմաց թաղամասում: Մինչև 1935թ. կոչվել է Ղարաքիլիսա: 1935թ. հունվարին Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի նախագահությունը որոշում է հեղափոխական Սերգեյ Միրոնովիչ Կիրովի հիշատակը հավերժացնելու նպատակով քաղաքը վերանվանել Կիրովական: 1939թ. գլխավոր հատակագծով (ճարտարապետներ՝ Ն. Զարգարյան, Ա. Մինասյան) որոշակի է դարձել քաղաքի կերպարը՝ զարգացման նշանակալից հեռանկարներով (արդյունաբերական կենտրոն և ամառանոցային վայր): 1949թ. կազմվել է նոր գլխավոր հատակագիծ (ճարտարապետներ՝ Հ Դավթյան, Ռ. Գրիգորյան): 1950-ական թվականներին կառուցապատվել է Կիրովի անվան (այժմ՝ Հայքի) հրապարակը՝ քաղաքի վարչակառավարչական կենտրոնը:

19-րդ դարում քաղաքում եղել է երկու եկեղեցի՝ կառուցված 1831թվականին (1828թ. երկրաշարժից քանդված հին եկեղեցու տեղում) և 1895թ. (ռուսական եկեղեցին): 1978թ. քաղաքում գործել են արդյունաբերական 27 ձեռնարկություններ: Այդ ժամանակաշրջանի արդյունաբերության առաջատարը Ալեքսանդր Մյասնիկյանի անվան քիմիական գործարանն էր: Ժամանակին քաղաքի խոշոր ձեռնարկություններից են եղել քիմիական մանրաթելերի,

ճշգրիտ հաստոցների, «Ավտոգենմաշ», «Ավտոմատիկա» գործարանները, տրիկոտաժի, կահույքի, կարի արտադրական միավորումները: «Պոլիմերսոսինձ» գիտաարտադրական միավորումն իր բնագավառի առաջատար գիտական կենտրոններից էր: Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս մեծ համբավ են ունեցել այն ժամանակ Կիրովականի կահույքի, մորթու-մուշտակի, կարի ֆաբրիկաները, «Լոռի» հանքային ջրերի գործարանն ու թեթև արդյունաբերության այլ ձեռնարկություններ:

1992թ. քաղաքը կոչվում է Վանաձոր: Այն Հայաստանի Հանրապետության երրորդ քաղաքն է (80000 բնակչություն՝ 2017թ., իսկ 1988թ.-ին՝ 178000), Լոռու մարզկենտրոնը:
Այսօր քաղաքը մեծամասամբ հաղթահարել է 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքները և թևակոխել է զարգացման նոր փուլ: Այժմ քաղաքը զարգացման երկրորդ շունչն է առնում: Վանաձորում գործում են թատրոններ, թեթև արդյունաբերական ձեռնարկություններ, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը և այլն:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Վանաձորը Հայաստանի Հանրապետության երրորդ քաղաքն է և Լոռի մարզի մարզկենտրոնը: Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից միջին հաշվով 1376 մ բարձրության վրա, Բազումի և Փամբակի լեռների հովտում, Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի գրեթե միջնամասում: Քաղաքային համայնքի գրաված տարածքը կազմում է 26.0 կմ^2, որից 15,52 կմ^2 հանդիսանում է համայնքային սեփականություն: Տարածքով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը, ինչպես նաև Լոռի անվանմամբ հանքային ջրերի աղբյուրը:

Նախկինում քաղաքն անվանվում էր Ղարաքիլիսա՝ գոյություն ունեցող սև քարից կառուցված այսպես կոչված «սև եկեղեցու» թաթարերեն անվանմամբ: 1801թ. Վրաստանի հետ մեկտեղ Լոռին նույնպես մտնում է Ռուսական կայսրության կազմի մեջ: Հետագայում՝ 1849թ., Ղարաքիլիսան ներառվում է Երևանի նահանգի մեջ: Արևմտյան Հայաստանից ներգաղթյալների շնորհիվ, բնակավայրի բնակչության աճին զուգընթաց, Վանաձորը քաղաքային բնակավայր է դարձել 1924թ.-ից: 1935թ.-ի հունվարից վերանվանվել է Կիրովական՝ խորհրդային ականավոր պետական գործիչ Ս.Մ.Կիրովի հիշատակը հավերժացնելու նպատակով:

Ներկայիս անվանումը քաղաքը ստացել է արդեն Խորհրդային Միության փլուզումից հետո՝ 1992թ.-ից: Քաղաքը մեծապես վնասվել էր 1988թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով:

Մինչև 1990-ական թվականները քաղաքը խոշոր արդյունաբերական կենտրոն էր ավելի քան 178 հազ. բնակչությամբ (1988թ.), զարգացած քիմիական ու մեքենաշինական գործարաններով, թեթև ու սննդի արդյունաբերության ձեռնարկություններով, ջերմային էլեկտրակենտրոնով և այլն:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կլիման լեռնային, մայրցամաքային է՝ ցուրտ ձմեռներով և զով ամառներով: Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 18.70C, հունվարին՝ -2.50C, միջին տարեկանը՝ 8.30C: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 370C, բացարձակ նվազագույնը՝ -29.80C: Քամիների միջին տարեկան արագությունը՝ 2.1 մ/վ, համեմատաբար հողմառատ հունվար ամսվա միջին ցուցանիշը՝ 3,1 մ/վ: Մթնոլորտային ճնշումը միջին հաշվով 862 հՊա (646.5 մմ Hg) է:

Օդի հարաբերական խոնավությունը տարվա ընթացքում 69-ից 74 տոկոսի սահմաններում է: Բուսականության համար խոնավության պայմանները բարենպաստ են: Համայնքում տեղումների տարեկան միջին քանակն է 567 մմ, ընդ որում տեղումների մեծ մասը գրանցվում է տարվա տաք ամիսներին՝ հունիսին 61 մմ օրական առավելագույնով:

Ջեռուցման շրջանի տևողությունը 195 օր (հոկտեմբերի 17-ից մինչև ապրիլի 29-ը), օդի հաշվարկային ջերմաստիճանը՝ -160C (98% ապահովվածություն), միջին ջերմաստիճանը ջեռուցման շրջանում՝ +1.00C:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Կիրովական /1935թ./
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	0
2.2) մայրաքաղաքից (կմ)	120
2.3) մարզկենտրոնից (կմ)	0
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	106,8 և 87,5
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	0
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	-
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	224
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1376
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	25.99/2599.33
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Սպիտակ, Ազնվաձոր, Արջուտ, Բազում, Գուգարք, Դարպաս, Լեռնապատ, Շահումյան, Փամբակ
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	060 65 00 40

8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	19
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	01.01.2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	121356
2. Գրանցված ծնունդների քանակը	1236
2.Մահացության դեպքերի քանակը	367
3.Ամուսնությունների քանակը	492
4. Ամուսնալուծությունների քանակը	159
5. Տնային տնտեսությունների թիվը	17975
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	1455
7. Կենսաթոշակառուների քանակը	24 840
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	8188

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	1 մասսայական և 3 մանկական
2. Արվեստի դպրոցների քանակը	4
3. Երաժշտական դպրոցների քանակը	3
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	20
5. Հանրակրթական դպրոցների քանակը	3 միջնակարգ, 20 հիմնական, 3 ավագ, Բնագիտական առարկաների մասնագիտացված՝ 1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	1
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	5
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	6

9. Մարզադպրոցների քանակը (ընդհանուր)	12

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	1 545 333
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	1054
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	5757

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	10518,89
2. Բնակավայրերի հողեր (հա)	2483,11
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	418,31
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	108,55
5. Հատուկ նշանակության	0
6. Հատուկ պահպանվող տարածքների	138,18
7. Անտառային	6868,92
8. Ջրային	77,97
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1601
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	58
11. Խոզերի գլուխաքանակը	241
12. Գյուղատնտեսական տեխնիկա	
12.1 տրակտորներ (քանակը)	-
12.2 կոմբայններ (քանակը)	-
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	-

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	255
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	Այո

5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	225
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	-
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 Աղբատար մեքենաների քանակը	10
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	2
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	1
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	17,478
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	12 բանկ՝ 17 մասնաճյուղ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	174
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	135
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	33

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
84 վթարային շենքեր	3-րդ կարգի վթարային բազմաբնակարան շենքերի ուժեղացում, սեյսմազինվածության բարձրացում
համայնքում առկա կիսակառույց շենքեր /Տարոն թաղամաս/	օտարում, կամ վերակառուցում
Վթարային հենապատեր	վերականգնում
Համայնքում առկա կամուրջներ	վերանորոգում

Հանրային զուգարանների բացակայություն	քաղաքի տարբեր հատվածներում հանրային զուգարանների կառուցում
Հանրային զուգարանների բացակայություն	քաղաքի տարբեր հատվածներում հանրային զուգարանների կառուցում
Մշակույթ	
Գուսան Զաքարյանի անվան արվեստի դպրոց	վերանորոգում, գազաֆիկացում, գույքի ձեռքբերում
Վանաձորի Կոմիտասի անվան արվեստի դպրոց	դահլիճի վերանորոգում
Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ (ՀՈԱԿ)	արևային պանելների տեղադրում
Կրթություն	
թվով 14 մանկապարտեզ	հիմնանորոգում, կոսմետիկ վերանորոգում
Կոմունալ	
Սանիտարական աղբավայրի կառուցում	Հրատապ խնդիր
Ներհամայնքային ճանապարհների անբավարար վիճակ	Փողոցների ասֆալտապատում՝ փողոցների ընթացիկ նորոգում կամ փողոցների կապիտալ նորոգում
Մայթերի անբավարար վիճակ	Մայթերի կապիտալ նորոգում
Գիշերային լուսավորություն	արդիականացում, էներգաարդյունավետ միջոցների կիրառում
Անձրևաջրատար համակարգի անմխիթար վիճակ	վերակառուցում արդիականացում
Տրանսպորտ	
Կանգառներ	Նոր կանգառների կառուցում, արդիականացում
Ճանապարհային երթևեկության	արդիականացում
Ներհամայնքային երթուղիներ	մոնիթորինգ, նոր երթուղիներ
Սպորտ	
Թվով 10 մարզադպրոցներ	դպրոցների արդիականացում, վերանորոգում/ վերակառուցում, գույքի ձեռքբերում
Համապիրություններ և բնակարանային տնտեսություն	
Անբարեկարգ բակեր	բակերի բարեկարգում, արդիականացում
Բազմաբնակարան շենքերի տանիքներ	Թեք և հարթ տանիքների հիմանորոգում
Թվով 42 չգործող վերելակներ	վերելակների վերանորոգում
Խաղահրապարակներ	խաղահրապարակների կառուցում, արդիականացում
Տուրիզմի զարգացում	
«Մայմեխ լեռնադահուկային համալիրի կառուցում»	կառուցում, տուրիզմի զարգացում, սպորտի զարգացում,

Վանաձորի կիրճի բարեկարգում	կիրճի բարեկարգում
«Թագավորանիստ» քաղաքի հնագիտական կենտրոնի կառուցում	թանգարանի կառուցում
Գործարար միջավայր	
Աշխատատեղերի բացակայություն	նոր բիզնեսների բացում և աջակցություն